# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N << ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-1>>

ք. Երևան « 5 » փետրվարի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթոյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև Պատվիրատու), մի կողմից, և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մխոյանի (այսուհետև Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **9540000** ( ինը միլիոն հինգ հարյուր քառասուն հազար ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունք ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմեր պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադա համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությա

…ահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների …վազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան<br>ք. Երևան, Արգիշտիի փ. 1<br>ՀՎՀՀ 02593108<br>Կենտրոնական գանձապետարան<br>Հ/Հ 900032313216 | «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ<br>ք. Երևան, Հալաբյան 59<br>Կոնվերս բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 1930058863560100<br>ՀՎՀՀ 01213386 |
| Գ. Չթրյան ---------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | Ա. Մխոյան -----------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| որ ավ իրո վ ա ա ռե ավ ած / հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| | **Արաբկիր վարչական շրջան** | | | | | | |
| *1* | 92621110/397 | **ա/** Արաբկիր վարչական շրջանի սուսերամարտի բաց առաջնությունը տեղի է ունենալու հունվարի 20-ից 30-ն ընկած ժամանակահատվածում՝ Արաբկիր վարչական շրջանի §Ա.Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում: Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել գավաթն»ր /ոսկեգույն- 2 հատ փոքր՝ 30սմ, 2հատ միջին՝ 40սմ բարձրությամբ և 1 հատ մեծ 50սմ բարձրությամբ/, մ»դալն»ր /5-ը՝ ոսկեգույն, վրան գրված I տեղ, 5-ը՝ արծաթագույն, վրան գրված II տեղ և 10-ը՝ բրոնզագույն, վրան գրված III տեղ/, հավաստագր»ր և պատվոգր»ր՝ 20 հատ /Չևաթղթ»րը պ»տք է տպագրված լին»ն միակողմանի A-4 ֆորմատի թղթի վրա, խտությունը՝ 120 գ/քմ, գունավոր, սնդուսափայլ, նախատ»սված I, II և III մրցանակային տ»ղ»րի համար/:<br>Միջոցառումը տևելու է 3 օր, որի ընթացքում թվով 18 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:<br><br>**բ/** Արաբկիր վարչական շրջանի շախմատի բաց առաջնությունը հանրակրթական դպրոցների աշակերտների միջև տեղի է ունենալու փետրվարի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝ §Արաբկիրի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ում: Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել թվով 9 հատ ժամացույցներ՝ ձեռքի, արտասահմանյան արտադրության, բարձր որակի, մեխանիկական, սև կամ շագանակագույն կաշվե կապիչով, հավաստագր»ր և պատվոգր»ր՝ 6 հատ /Չևաթղթ»րը պ»տք է տպագրված լին»ն միակողմանի A-4 ֆորմատի թղթի վրա, խտությունը՝ 120 գ/քմ, գունավոր, սնդուսափայլ, նախատ»սված I, | դրամ | 1478000 | 5 | ***Արաբկիր վարչական շրջան*** | 20.01.2018-31.03.2018 |

II և III մրցանակային տ»ղ»րի համար/: Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 8 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

**գ/** Հանրակրթական դպրոցների 27-րդ մարզական խաղերի ծրագրով Արաբկիր վարչական շրջանի առաջնությունը տեղի է ունենալու փետրվարի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում՝ Արաբկիր վարչական շրջանի մարզադպրոցներում և մարզադահլիճներում՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, բասկետբոլ, ֆուտզալ, հանդբոլ և թեթև ատլետիկա սպորտաձևերով:

• Ֆուտբոլ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 15, օրերի քանակը՝ 6
• Վոլեյբոլ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 12, օրերի քանակը՝ 6
• Սեղանի թենիս-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 12, օրերի քանակը՝ 6
• Բասկետբոլ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 12, օրերի քանակը՝ 6
• Ֆուտզալ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 10, օրերի քանակը՝ 6
• Հանդբոլ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 12, օրերի քանակը՝ 6
• Թեթև ատլետիկա-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը՝ 4:

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

**դ/** Արաբկիր վարչական շրջանի սեղանի թենիսի բաց առաջնությունը տեղի է ունենալու մարտի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝ §Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում: Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել.

Համազգեստ /6 լրակազմ/ սպորտային շապիկ և շորտ:

Սպորտային շապիկի /պոլո/ հումքը՝ տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը՝ սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 4,5 X 4սմ չափսով: Շապիկի թիկնամասում 20սմx20սմ չափով գրված լինի §Արաբկիր»:

Շորտը 100 % պոլիէստեր, գույնը՝ սև, սպիտակ, կարմիր կամ
կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը, դիմացի աջ և ձախ կողմից երկու բաց գրպան:

Պարտադիր պայման է համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը՝ թիմերին կրելու իր արտադրանքը:

Մարզահագուստ /2 լրակ/՝ բաղկացած պիջակից և տաբատից, 100 % պոլիէստեր, վերնազգեստի գույնը՝ կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը՝ սև: Պիջակը կայծակ-ճարմանդով: Դիմացի աջ կողմում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ օծիքից 16սմ ներքև: Տաբատի ձախ գրպանի հատվածում՝ արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 6 X 4 սմ չափից ոչ ավել, Համազգեստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ՝ վերնազգեստի գույնի:

Մարզակոշիկ /6 զույգ/ մոդելը կլասիկ, կարված կոմբինացված սինթետիկ նյութերից, դիմացի վերևի հատվածը՝ սինթետիկ, լեզվակը՝ տեքստիլ: Գույնը սև կամ սպիտակ: Լեզվակի վրա և յուրաքանչյուր զույգի դրսի ետևի հատվածում տեղադրված է արտարողի ապրանքանշանը: Քուղը՝ սև կամ սպիտակ: Կոշկատակը հատուկ ամրության ռետինից՝ թերմոպլաստիկ էլաստոմերից:

Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել գավաթն»ր՝ ոսկեգույն-1 հատ փոքր՝ 30սմ - 1 հատ միջին՝ 40սմ և 1 հատ մեծ՝ 50սմ բարձրությամբ, մ»դալն»ր /6-ը՝ ոսկեգույն, վրան գրված I տեղ, 6-ը՝ արծաթագույն, վրան գրված II տեղ և 6-ը՝ բրոնզագույն, վրան գրված III տեղ/:

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 24 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն << կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

**ե/** Հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-8-րդ դասարանների միջև <<Սպորտլանդիա>> մարզական միջոցառում 3 փուլով՝ ԱՎՇ, Երևան քաղաք և << առաջնություն տեղի է ունենալու մարտի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում վարչական շրջանի դպրոցների մարզադահլիճներում և Երևանի մարզադպրոցներում: Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել.

Սպորտային գույք՝

Համազգեստ /20 լրակազմ/ սպորտային շապիկ և շորտ:

Սպորտային շապիկի /պոլո/ հումքը՝ տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը՝ սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում՝ կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 4,5 X 4սմ չափսով:

Շորտը 100 % պոլիէստեր, գույնը՝ սև, սպիտակ, կարմիր կամ կապույտ:

Պարտադիր պայման է համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը՝ թիմերին կրելու իր

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | արտադրանքը:<br>Մարզահագուստ /4 լրակ/ բաղկացած պիջակից և տաբատից, 100 % պոլիէստեր, վերնազգեստի գույնը կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը սև: Պիջակը կայծակ-ճարմանդով: Դիմացի աջ կողմում արտադրողի առևտրային տարբերանշանը օձիքից 16սմ ներքև: Տաբատի ձախ գրպանի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը 6 X 4 սմ չափսից ոչ ավել: Համազգեստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ վերնազգեստի գույնի:<br>Միջոցառումը տևելու է 2 օր, որի ընթացքում թվով 24 մասնակիցներին պետք է տրվի սննդի օրական վճար համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/: | | | | | |
| 2 | 92621110/397 | **ա/** Հանրակրթական դպրոցների 27-րդ մարզական խաղերի ծրագրով Երևան քաղաքի առաջնությունը տեղի է ունենալու ապրիլի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում Երևանի մարզադպրոցներում և մարզադահլիճներում: Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել.<br>Սպորտային գույք<br>• ֆուտբոլի գնդակ /2 հատ/ - արհ»ստական կաշի, N5, 600գր<br>• բասկ»տբոլի գնդակ /2 հատ/ - N7, 620 գրամ<br>• վոլ»յբոլի գնդակ /2 հատ/ - արհ»ստական կաշի, 350գրամ<br>• հանդբոլի գնդակ /2 հատ/ - կաշվից, 3 համար<br>• ս»ղանի թ»նիսի ռակ»տա /6 հատ/ - փայտ», ռ»տին» թաղանթով, կտոր» պատյանով /26-14.5 չափսի/<br>Մարզահագուստ /15 լրակազմ/ բաղկացած վերնամասից և տաբատից, 100 % պոլիէստեր: Վերնամասի գույնը կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը սև: Վերնամասը կայծակ-ճարմանդով: Մարզահագուստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ վերնազգեստի գույնի:<br>Համազգ»ստ /139 լրակազմ/ սպորտային շապիկ և շորտ<br>Սպորտային շապիկի /պոլո/ հումքը տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը 4,5 X 4սմ չափսով: Շապիկի թիկնամասում 20սմx20սմ չափով գրված լինի §Արաբկիր»:<br>Շորտը 100 % պոլիէստեր, գույնը սև, սպիտակ, կարմիր կամ<br>կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը, դիմացի աջ և ձախ կողմից երկու բաց գրպան: | դրամ | 4397000 | 6 | *Արաբկիր վարչական շրջան* | 01.04.2018-30.06.2018 |

Պարտադիր պայման է մարզահագուստ և համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը՝ թիմերին կրելու իր արտադրանքը:

Մարզակոշիկ /139 զույգ/ մոդելը կլասիկ, կարված կոմբինացված սինթետիկ նյութերից, դիմացի վերևի հատվածը սինթետիկ, լեզվակը տեքստիլ: Գույնը սև կամ սպիտակ: Լեզվակի վրա և յուրաքանչյուր զույգի դրսի եռևի հատվածում տեղադրված է արտարողի ապրանքանշանը: Քուղը սև կամ սպիտակ: Կոշկատակը հատուկ ամրության ռետինից թերմոպլաստիկ էլաստոմերից:

Առաջնությունը կայանալու է ֆուտբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, բասկետբոլ, ֆուտզալ և թեթև ատլետիկա, հանդբոլ, լողափնյա վոլեյբոլ և բաժմինթոն սպորտաձևերով.

- Ֆուտբոլ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 17, օրերի քանակը՝ 6
- Վոլեյբոլ /աղջիկներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 13, օրերի քանակը՝ 6
- Վոլեյբոլ /տղաներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը՝ 6
- Սեղանի թենիս /աղջիկներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 5, օրերի քանակը՝ 6
- Սեղանի թենիս /տղաներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 4, օրերի քանակը՝ 6
- Բասկետբոլ /աղջիկներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը՝ 6
- Բասկետբոլ /տղաներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 13, օրերի քանակը՝ 6
- Ֆուտզալ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը՝ 6
- Թեթև ատլետիկա /աղջիկներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 11, օրերի քանակը՝ 4
- Թեթև ատլետիկա /տղաներ/-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 12, օրերի քանակը՝ 4
- Հանդբոլ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 27, օրերի քանակը՝ 6
- Լողափնյա վոլեյբոլ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 9, օրերի քանակը՝ 6
- Բաժմինթոն-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 11, օրերի քանակը՝ 6 :

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում մրցավարներին և սպասարկող անձնակազմին պետք է տրվի սննդի օրական վճար համաձայն ՀՀ կառավարության 2004թ. Մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

**բ/** §Ազգային ժողովի գավաթի» առաջնությունը Արաբկիր վարչական շրջանի հանրակրթական դպրոցն»ի 1-6-րդ դասարանն»րի միջև տեղի է ունենալու

ապրիլի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում` §Երևանի Հ. Իսակովի անվան հ.132 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խաղահրապարակում:

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 18 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար` համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

բ/ §Ազգային ժողովի գավաթի» առաջնությունը Արաբկիր վարչական շրջանի հանրակրթական դպրոցն»ի 1-6-րդ դասարանն»ի միջև տեղի է ունենալու ապրիլի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում` §Երևանի Հ. Իսակովի անվան հ.132 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խաղահրապարակում:

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 18 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար` համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

բ/ §Ազգային ժողովի գավաթի» առաջնությունը Արաբկիր վարչական շրջանի հանրակրթական դպրոցն»ի 1-6-րդ դասարանն»ի միջև տեղի է ունենալու ապրիլի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում` §Երևանի Հ. Իսակովի անվան հ.132 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խաղահրապարակում:

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 18 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար` համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

**գ/** §Ազգային ժողովի գավաթի» հանրակրթական դպրոցն»ի 1-6-րդ դասարանն»ի միջև Երևան քաղաքի առաջնությունը տեղի է ունենալու ապրիլի 1-ից 6-ը ընկած ժամանակահատվածում` Երևանի մարզադպրոցներում և մարզադահլիճներում:

Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել.

*Մարզահագուստ /6 լրակազմ/* բաղկացած պիջակից և տաբատից, 100 % պոլիէստեր, վերնազգեստի գույնը` կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը` սև: Պիջակը կայծակ-ճարմանդով: Դիմացի աջ կողմում արտադրողի առևտրային տարբերանշանը` օձիքից 16սմ ներքև: Տաբատի ձախ գրպանի հատվածում` արտադրողի առևտրային տարբերանշանը` 6 X 4 սմ չափսից ոչ ավել, Համազգեստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ` վերնազգեստի գույնի:

*Համազգ»ստ /24 լրակազմ/* Սպորտային շապիկ և Շորտ

Սպորտային շապիկի /պոլո/ հումքը` տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը` սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում` կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում

արտադրողի առևտրային տարբերանշանը 4,5 X 4սմ չափսով: Շապիկի թիկնամասում 20սմx20սմ չափով գրված լինի §Արաբկիր»:

Շորտը 100 % պոլիէստեր, գույնը սև, սպիտակ, կարմիր կամ
կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը, դիմացի աջ և ձախ կողմից երկու բաց գրպան:

Պարտադիր պայման է մարզահագուստ և համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը թիմերին կրելու իր արտադրանքը:

Մարզակոշիկ /24 զույգ/ մոդելը կլասիկ, կարված կոմբինացված սինթետիկ նյութերից, դիմացի վերևի հատվածը սինթետիկ, լեզվակը տեքստիլ: Գույնը սև կամ սպիտակ: Լեզվակի վրա և յուրաքանչյուր զույգի դրսի ետևի հատվածում տեղադրված է արտարողի ապրանքանշանը: Քուղը սև կամ սպիտակ: Կոշկատակը հատուկ ամրության ռետինից թերմոպլաստիկ էլաստոմերից:

**դ/** Արաբկիր վարչական շրջանի ֆուտբոլի բաց առաջնությունը պատանիների միջև տեղի է ունենալու մայիսի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում Արաբկիրի Վ. Փափազյան 21/2 շենքին հարակից ֆուտբոլի դաշտում: Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել.

Սպորտային գույք թվով 2 հատ ֆուտբոլի գնդակ /արհ»ստական կաշի, N5, 600գր/

Համազգ»ստ /10 լրակազմ/ - Սպորտային շապիկ + Շորտ

Սպորտային շապիկի /պոլո/ հումքը տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը 4,5 X 4սմ չափսով: Շապիկի թիկնամասում 20սմx20սմ չափով գրված լինի §Արաբկիր»:
Շորտը 100 % պոլիէստեր, գույնը սև, սպիտակ, կարմիր կամ
կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը, դիմացի աջ և ձախ կողմից երկու բաց գրպան:

Մարզահագուստ /2 լրակազմ/ բաղկացած պիջակից և տաբատից, 100 % պոլիէստեր, վերնազգեստի գույնը կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը սև: Պիջակը կայծակ-ճարմանդով: Դիմացի աջ կողմում արտադրողի առևտրային տարբերանշանը օձիքից 16սմ ներքև: Տաբատի ձախ գրպանի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը 6 X 4 սմ չափսից ոչ ավել, Համազգեստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ վերնազգեստի գույնի:

Պարտադիր պայման է մարզահագուստ և համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը թիմերին կրելու իր արտադրանքը:

Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել գավաթն»ր՝ ոսկեգույն-1 հատ փոքր՝ 30սմ - 1 հատ միջին՝ 40սմ և 1 հատ մեծ՝ 50սմ բարձրությամբ/,մ»դալն»ր /10-ը՝ ոսկեգույն, վրան գրված I տեղ, 10-ը՝ արծաթագույն, վրան գրված II տեղ և 10-ը՝ բրոնզագույն, վրան գրված III տեղ/:

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 24 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

**ե/** ՀՀ նախագահի մրցանակի համար §Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի Արաբկիր վարչական շրջանի և Երևան քաղաքի առաջնությունը տեղի է ունենալու հունիսի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում՝ §Երևանի Հ. Իսակովի անվան h.132 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խաղահրապարակում: Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել.

Մարզահագուստ /24 լրակազմ/ բաղկացած պիջակից և տաբատից, 100 % պոլիէստեր, վերնազգեստի գույնը՝ կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը՝ սև: Պիջակը կայծակ-ճարմանդով: Դիմացի աջ կողմում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ օձիքից 16սմ ներքև: Տաբատի ձախ գրպանի հատվածում՝ արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 6 X 4 սմ չափսից ոչ ավել, Համազգեստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ՝ վերնազգեստի գույնի:

Համազգ»ստ /12 լրակազմ/ Սպորտային շապիկ + Շորտ

Սպորտային շապիկի /պոլո/ հումքը՝ տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը՝ սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում՝ կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 4,5 X 4սմ չափսով: Շապիկի թիկնամասում 20սմx20սմ չափով գրված լինի §Արաբկիր»:

Շորտը 100 % պոլիէստեր, գույնը՝ սև, սպիտակ, կարմիր կամ

կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը, դիմացի աջ և ձախ կողմից երկու բաց գրպան:

Պարտադիր պայման է մարզահագուստ և համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը՝ թիմերին կրելու իր արտադրանքը:

Մարզակոշիկ /36 զույգ/ մոդելը կլասիկ, կարված կոմբինացված սինթետիկ նյութերից, դիմացի վերևի հատվածը՝ սինթետիկ, լեզվակը՝ տեքստիլ: Գույնը սև կամ սպիտակ: Լեզվակի վրա և յուրաքանչյուր զույգի դրսի ետևի հատվածում տեղադրված է արտարողի ապրանքանշանը: Քուղը՝ սև կամ սպիտակ:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կոշկատակը հատուկ ամրության ռետինից թերմոպլաստիկ էլաստոմերից:<br><br>**գ/** §Առողջ ս»րունդ՝ պաշտպանված հայր»նիք» Արաբկիր վարչական շրջանի միջբակային առաջնությունը տեղի է ունենալու հունիսի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝ Արաբկիր վարչական շրջանի մարզադպրոցներում և մարզադահլիճներում:<br>- Մրցավարական և սպասարկող կազմի օրապահիկ՝<br>- Ֆուտբոլ - 6 /մրցավար/ X 6 /օր/<br>- Վոլեյբոլ - 6 մրցավար X 6 օր<br>- Բասկետբոլ - 6 մրցավար X 6 օր<br>- Հանդբոլ- 6 մրցավար X 6 օր<br>- Թ/ատլետիկա - 8 մրցավար X 2 օր<br>Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում մրցավարներին և սպասարկող անձնակազմին պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/: | | | | | |
| 3 | 92621110/397 | **ա/** Տարեցների հանրապետական խաղեր 3 փուլով՝ ԱՎՇ, Երևան քաղաք և ՀՀ առաջնություն - տեղի է ունենալու հուլիսի 1-6-ն ընկած ժամանակահատվածում՝ վարչական շրջանի և Երևան քաղաքի մարզաբազաներում:<br>Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել սպորտային գույք՝<br>• շախմատի տախտակ - 5 հատ/- փայտե, քարերը՝ պլաստմասե, 45սմ x 45.5սմ x 50սմ չափի<br>• նարդի /2 հատ/- փայտե 70սմ x 30սմ, քարերը՝ պլաստմասե /սև և սպիտակ/<br>• դարթս /2 հատ/- Սպիտակ դարձ իր ասեղներով, տրամագիծը՝ 31սմ:<br><br>**բ/** §Առողջ ս»րունդ՝ պաշտպանված հայր»նիք» Երևան քաղաքի միջբակային առաջնությունը տեղի է ունենալու հուլիսի 1-ից 7-ն ընկած ժամանակահատվածում՝ Երևանի մարզադպրոցներում և մարզադահլիճներում:<br>Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել սպորտային գույք՝<br>• ֆուտբոլի գնդակ /2 հատ/- արհ»ստական կաշի, N5, 600գր<br>• բասկ»տբոլի գնդակ /2 հատ/- N7, 620 գրամ<br>• վոլ»յբոլի գնդակ /2 հատ/- արհ»ստական կաշի, 350գրամ<br>• հանդբոլի գնդակ /2 հատ/- կաշվից, 3 համար<br>• շախմատ /2 հատ/- փայտե, քարերը պլաստմասե, 45սմ x 45.5սմ x 50սմ չափի<br>Մարզահագուստ /13 լրակազմ/ բաղկացած պիջակից և տաբատից, 100 % պոլիէստեր, վերնազգեստի գույնը՝ կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը՝ սև: Պիջակը կայծակ-ճարմանդով: Դիմացի աջ կողմում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ օձիքից 16սմ ներքև: Տաբատի ձախ գրպանի հատվածում՝ արտադրողի առևտրային տարբերանշանը | դրամ | 1877000 | 4 | *Արաբկիր վարչական շրջան* | *01.07.2018-30.09.2018* |

6 X 4 սմ չափսից ոչ ավել, Համազգեստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ՝ վերնազգեստի գույնի:

Համազգ»ստ /63 լրակազմ/ Սպորտային շապիկ և Շորտ

Սպորտային շապիկի /պոլո/ հումքը՝ տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը՝ սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում՝ կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 4,5 X 4սմ չափսով: Շապիկի թիկնամասում 20սմx20սմ չափով գրված լինի §Արաբկիր»:

Շորտը 100 % պոլիէստեր, գույնը՝ սև, սպիտակ, կարմիր կամ կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը, դիմացի աջ և ձախ կողմից երկու բաց գրպան:

Պարտադիր պայման է մարզահագուստ և համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը՝ թիմերին կրելու իր արտադրանքը:

Մարզակոշիկ /63 զույգ/ մոդելը՝ կլասիկ, կարված կոմբինացված սինթետիկ նյութերից, դիմացի վերևի հատվածը՝ սինթետիկ, լեզվակը՝ տեքստիլ: Գույնը սև կամ սպիտակ: Լեզվակի վրա և յուրաքանչյուր զույգի դրսի ետևի հատվածում տեղադրված է արտարողի ապրանքանշանը: Քուղը՝ սև կամ սպիտակ: Կոշկատակը հատուկ ամրության ռետինից թերմոպլաստիկ էլաստոմերից:

- Կաշվե գնդակ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը՝ 6
- Սրընթաց գնդակ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը 6
- Ոսկե զամբյուղ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը 6
- Թռչող գնդակ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 14, օրերի քանակը 6
- Շախմատ-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 4, օրերի քանակը 2
- Հեծանվավազք /Անիվ/ - մասնակիցներ՝ 4, օրերի քանակը՝ 2
- Աթլետիկա-մրցավարների և սպասարկող անձնակազմի քանակը՝ 12, օրերի քանակը 6

Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում մրցավարներին և սպասարկող անձնակազմին պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:

**գ/** Արաբկիր վարչական շրջանի սիրողական շախմատի 2018թ. բաց առաջնությունը տեղի է ունենալու օգոստոսի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝ Արաբկիր վարչական շրջանի Վ. Դավթյանի անվան գրասայգում:

Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է շախմատի տախտակ - 5

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հատ/- փայտե, քարերը՝ պլաստմասե, 45սմ x 45.5սմ x 50սմ չափի:<br>Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել թվով 9 հատ ժամացույցներ՝ ձեռքի, մեխանիկական, կաշվե կապիչով:<br>Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 12 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:<br><br>**դ/** Արաբկիր վարչական շրջանի վոլեյբոլի բաց առաջնությունը տեղի է ունենալու սեպտեմբերի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝ §Երևանի Գայի անվան թիվ 129 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճում: Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 4 հատ վոլ»յբոլի գնդակ /արհ»ստական կաշի, 350գրամ/:<br>Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել գավաթն»ր /ոսկեգույն- 1 հատ փոքր՝ 30սմ, 1հատ միջին՝ 40սմ բարձրությամբ և 1 հատ մեծ 50սմ բարձրությամբ/, մ»դալն»ր /12-ը՝ ոսկեգույն, վրան գրված I տեղ, 12-ը՝ արծաթագույն, վրան գրված II տեղ և 12-ը՝ բրոնզագույն, վրան գրված III տեղ/:<br>Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 26 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/: | | | | | |
| 4 | 92621110/397 | **ա/** Արաբկիր վարչական շրջանի ծյուդոյի բաց առաջնությունը տեղի է ունենալու հոկտեմբերի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում: Առաջնությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է վարձակալել Երևանի §Դինամո»» մարզադահլիճը /2 օր/, որը պետք է կահավորված լինի ծյուդոյի մրցումների համար նախատեսված սպորտային տատամիով, թվով 36 մարզիկների համար պետք է ձեռք բերվի ծյուդոյի կիմանոներ /բամբակյա, սպիտակ/:<br>Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել ոսկեգույն գավաթն»ր՝ 30 հատ, մեծ, 40սմ բարձրությամբ/, մ»դալն»ր /12-ը՝ ոսկեգույն, վրան գրված I տեղ, 12-ը՝ արծաթագույն, վրան գրված II տեղ և 12-ը՝ բրոնզագույն, վրան գրված III տեղ/, 32 հատ հավաստագրեր և պատվոգրեր /Չևաթղթ»րը պ»տք է տպագրված լին»ն միակողմանի A-4 ֆորմատի թղթի վրա, խտությունը՝ 120 գ/քմ, գունավոր, սնդուսափայլ, նախատ»սված I, II և III մրցանակային տ»ղ»րի համար/:<br>Միջոցառումը տևելու է 2 օր, որի ընթացքում թվով 23 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/: | դրամ | 1788000 | 4 | *Արաբկիր վարչական շրջան* | *01.10.2018-25.12.2018* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **բ/** Նախազորակոչային և զորակոչային տարիքի ռազմամարզական խաղեր, Արաբկիր վարչական շրջանի մասնակցությունը Երևան քաղաքի առաջնությանը տեղի է ունենալու հոկտեմբերի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝ Երևանի §Հաղթանակ» զբոսայգում:<br>Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել.<br>Մարզահագուստ /2 լրակազմ/ բաղկացած պիջակից և տաբատից, 100 % պոլիէստեր, վերնազգեստի գույնը՝ կարմիր կապույտ, սպիտակ, նարնջագույն կամ դրանց համադրությունը, տաբատը՝ սև: Պիջակը կայծակ-ճարմանդով: Դիմացի աջ կողմում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ օձիքից 16սմ ներքև: Տաբատի ձախ գրպանի հատվածում՝ արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 6 X 4 սմ չափսից ոչ ավել, Համազգեստի տաբատը ուղիղ է, տաբատի գրպանները չերևացող կայծակ - ճարմանդով, տաբատի դրսի մասի ամբողջ երկայնքով կարված է դեկորատիվ գիծ՝ վերնազգեստի գույնի:<br>Համազգ»ստ /18 լրակազմ/ Սպորտային շապիկ + Շորտ<br>Սպորտային շապիկի /պոլո/ հումքը՝ տրիկոտաժ, 100 % բամբակ, գույնը՝ սպիտակ, կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Դիմացի մասում՝ կոճակներ պոլո ձևով: Դիմացի աջ մասում արտադրողի առևտրային տարբերանշանը՝ 4,5 X 4սմ չափսով:<br>Շապիկի թիկնամասում 20սմx20սմ չափով գրված լինի §Արաբկիր»:<br>Շորտը 100 % պոլիէստեր, գույնը՝ սև, սպիտակ, կարմիր կամ<br>կապույտ, ձախ ոտքի դրսի կողքի հատվածում արտադրողի առևտրային տարբերանշանը, դիմացի աջ և ձախ կողմից երկու բաց գրպան:<br>Պարտադիր պայման է մարզահագուստ և համազգեստ արտադրողի կողմից թույլտվության փաստաթուղթը՝ թիմերին կրելու իր արտադրանքը:<br>Մարզակոշիկ /18 զույգ/ մոդելը կլասիկ, կարված կոմբինացված սինթետիկ նյութերից, դիմացի վերևի հատվածը՝ սինթետիկ, լեզվակը՝ տեքստիլ: Գույնը սև կամ սպիտակ: Լեզվակի վրա և յուրաքանչյուր զույգի դրսի ետևի հատվածում տեղադրված է արտարողի ապրանքանշանը: Քուղը՝ սև կամ սպիտակ: Կոշկատակը հատուկ ամրության ռետինից՝ թերմոպլաստիկ էլաստոմերից:<br><br>**գ/** Արաբկիր վարչական շրջանի բասկ»տբոլի բաց առաջնությունը տեղի է ունենալու նոյեմբերի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝ Ստ. Զորյանի անվան հ. 56 դպրոցի մարզադահլիճում: Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել գավաթն»ր /ոսկեգույն- 1 հատ փոքր՝ 30սմ, 1 հատ միջին՝ 40սմ բարձրությամբ և 1 հատ մեծ 50սմ բարձրությամբ/, մ»դալն»ր /12-ը՝ ոսկեգույն, վրան գրված I տեղ, 12-ը՝ արծաթագույն, վրան գրված II տեղ և 12-ը՝ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բրոնզագույն, վրան գրված III տեղ:<br>6 հատ հավաստագրեր և պատվոգրեր /Չևաթղթ»րը պ»տք է տպագրված լին»ն միակողմանի A-4 ֆորմատի թղթի վրա, խտությունը՝ 120 գ/քմ, գունավոր, սնդուսափայլ, նախատ»սված I, II և III մրցանակային տ»ղ»րի համար/:<br>Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 26 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. Մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/:<br><br>**դ/** Արաբկիր վարչական շրջանի շախմատի բաց առաջնությունը - տեղի է ունենալու դեկտեմբերի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում՝Արաբիրի շախմատի դպրոցում:<br>Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է շախմատի տախտակ - 5 հատ/- փայտե, քարերը՝ պլաստմասե, 45սմ x 45.5սմ x 50սմ չափի:<br>Միջոցառման ավարտից հետո հաղթողները կպարգևատրվեն, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել թվով 10 հատ ժամացույցներ՝ ձեռքի, մեխանիկական, կաշվե կապիչով:<br>Միջոցառումը տևելու է 6 օր, որի ընթացքում թվով 12 մրցավարների և սպասարկող անձնակազմի պետք է տրվի սննդի օրական վճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 13-ի թիվ 692-Ն որոշման /հավելված 1/: | | | | | |

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313216

Գ. Չթոյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ ա տ ա ր ո ղ**

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930058863560100
ՀՎՀՀ 01213386

Ա. Մխոյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
« 5 » « փետրվարի » 2018թ. կնքված
*ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-1* գնման պայմանագրի հավելված

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Չափ. ամարը | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 20 18 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| | Արաբկիր վարչական շրջան | | | | | | | | | | | | | |
| **1-4** | Սպորտային միջոցառումներ | | 1563400 | 1563400 | 6045600 | 6045600 | 6045600 | 7994000 | 7994000 | 7994000 | 9540000 | 9540000 | 9540000 | 9540000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313216

Գ. Չթոյան --------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930058863560100
ՀՎՀՀ 01213386

Ա. Մխոյան --------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«    »    2018 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ____________________ |
| ________________________ | ________________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*§    »§        » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույց/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«   »   20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*"ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-1»* ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

## ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «5_» փետրվարի 2018 թ.

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մխոյանի /BA 2915628, տրվ. 06.06.2016 թ., 001-ի կողմից՝ որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ _**"ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-1**_* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
<Կոնվերս բանկ> ՓԲԸ
Հ/Հ 1930058863560100
ՀՎՀՀ 01213386

Ա. Մխոյան ---------------------
(ստորագրություն)
Կ.Տ

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2] N

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը <Կոնվերս բանկ> ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1930058863560100

6. Վճարողի ՀՎՀՀ 01213386

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ 954000 / ինը հարյուր հիսունչորս հազար /

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովում)*

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ***ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-1***

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը　　17. կից՝--- էջ

| 19.ա. Շահառուի ստորագրությունները | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝ |
|---|---|
| /____________________/ | /____________________/ |
| /____________________/ | /____________________/ |
| 19.բ. Կ.Տ. | 18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից | Կատարված է վճարողի բանկի կողմից |
| 20.ա. /____________________/ /ստորագրություն/ | 21.ա. /____________________/ /ստորագրություն/ |
| 20.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |
| "___" ___ 20___ թ. | 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*